ՏԵՂԵԿԱՆՔ

««Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չեխիայի Հանրապետության Կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին» Արձանագրության ստորագրման նպատակահարմարության մասին

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թուլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագիրը ստորագրվել է 2013թ.-ի ապրիլի 19-ին, և ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ից:

Համաձայնագրի միջոցով Պայմանավորվող կողմերը նախատեսում են փոխադարձության հիման վրա ստեղծել արագ և արդյունավետ իրավական ընթացակարգեր այն անձանց հայտնաբերման և անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում, կամ այլևս չեն բավարարում Հյաստանի կամ Եվրոպական միության անդամ պետություններից մեկի տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար պահանջներին, և դյուրացնելու այդպիսի անձանց տարանցումը՝ համագործակցության ոգով:

Մինչ այս Համաձայնագրի կնքումը Հայաստանի Հանրապետությունը ռեադմիսիայի վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր է ստորագրել Եվրոպական միության անդամ 10 պետությունների հետ: Այս համաձայնագիրը, հնարավորություն է տալիս ԵՄ անդամ բոլոր պետությունների հետ սահմանել և իրականացնել միասնական ընթացակարգեր՝ Կողմերի տարածքներում առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման հարցերում:

Համաձայնագրի 20-րդ հոդվածի համաձայն. <Չխախտելով սույն Համաձայնագրի ուղղակի կիրառելիությունը՝ անդամ պետության կամ Հայաստանի դիմումի հիման վրա՝ Հայաստանը և անդամ պետությունը կազմում են կիրարկող արձանագրություն, որը նաև կարգավորում է, ի թիվս այլ հարցերի, հետևյալը՝

ա) իրավասու մարմինների նշանակումը, սահմանային անցակետերին և կոնտակտային անձանց վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը,

բ) ուղեկցությամբ վերադարձի պայմանները՝ ներառյալ երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ուղեկցությամբ տարանցումը,
գ) միջոցները և փաստաթղթերը՝ ի հավելումն Համաձայնագրի 1-4-րդ հավելվածներում թվարկվածների,
դ) հետընդունման ձևերը՝ արագացված ընթացակարգերի ներքո,
ե) հարցազրույցների ընթացակարգը:>

««Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չեխիայի Հանրապետության Կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին»
Արձանագրության արձանագրության նախագծով կարգավորվում են Համաձայնագրի 20-րդ հոդվածում նշված վերոհիշյալ հարցերը:

Ելնելով վերոգրյալից, ««Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չեխիայի Հանրապետության Կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին» Արձանագրության ստորագրումը համարում ենք նպատակահարմար: